ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՎԱՆԻ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.)
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
COMMUNITI ADMINISTRATION
OF TSAGHKAVAN(TAUSH REG.)

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2016 թ. թիվ 23 - Ն

Նիստ N 4

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 5 անդամներից 4 -ը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի 2017-2021 թթ սոցիալ - տնտեսական զարգացման ծրագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից :

Կողմ - 4, դեմ – 0, ձեռնպահ – չկա:

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Արման Սպարտակի Բալդրյան կողմ / ստորագրություն /
2. Վաղինակ Սայադի Ղազարյան կողմ / ստորագրություն /
3. Անդրանիկ Սերյոժայի Մկրտումյան կողմ / ստորագրություն /
4. Արծրուն Սևանի Սիմոնյան կողմ / ստորագրություն

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

Հաստատված է
Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 23-Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 թթ.

ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝ Աղասի Ղազարյանը

Ծաղկավան(Տաուշի շրջ.) 2016թ.

Բովանդակություն

<u>Ինչ է համայնքի սոցիալ -տնտեսական զարգացման ծրագիրը</u>

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակը:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի,նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում
5. Համայնքի զարգացման ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված 1. Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը:
2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ինչ է սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը

Համայնքի զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և համայնքապետարանի շխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ - տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնա-խընդիրների բացահայտման, ֆինանսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն , որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը

1. Ինչ է սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը

Աշխարհագրական դիրքը

ՀՀ Տավուշի մարզի Ծաղկավան (Տաուշի շրջ.) գյուղը գտնվում է Իջևան քաղաքից 77 կմ արևելք,Հախում գետի ձախ ափին ՝ լեռնալանջի արևելյան լանջին, Իջևան –Բերդ ճանապարհի վրա: Համայնքը սահմանակից է Վարագավան, Տաուշ, Չինչին, Այգեհովիտ համայնքներին:Ծովի մակերեևույթից բարձր է 904 մ: Զբաղեցնում է 2446,52 հա տարածք, մոտակայքն անտառապատ է շրջապատված է ոչ բարձր լեռներով, որոնց լանջերը պատված են թփուտներով:Մատենագիտության մեջ նշվում է Վելի, Վելիգեղ, Վելի գյուղ անուններով: 1939 թ. մայիսի 4-ին վերանվանվել է Ծաղկավան, իսկ 1996- ին՝ Վերին Ծաղկավան: 1922 թ. ուներ 501,1939 թ. ՝1105, 1979 թ. ՝1100, 01.01.2016 թ.՝ 982 բնակիչ: Ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, համայնքային ենթակայության 1գրադարան , մշակույթի տուն: Համայնքն ունի 500 տ.տարողությամբ տարողությամբ 2 ջրամբարներ, որոնք գործում են 4 ժամյա խմելու ջրի մատակարարմամբ, համայնքի 301 բնակելի տներից 212 - Á

գազաֆիկացված են, էլեկտրաէներգիան ստանում են 1000 կվա ենթակայանից՝ ¨ համայնքում գործում են 2 տրանսֆորմատորային կայան :/100 և 75 կվա/:

Համայնքում գործում են 1 հաց արտադրող, 1 Հայ-Փոստ Տավուշի մասնաճյուղ սպասարկող, 2 էլեկտրաէներգիայի արտադրության ձեռնարկություններ

Կլիման բարեխառն է , ձմեռը մեղմ է, իսկ ամառը՝ համեմատաբար զով, տեղումների տարեկան միջինը՝ 600-650 մմ: Համայնքի կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ ռելիեֆի և դրա բնակելի տարածքների համար արտահայտված են հետևյալ տիպերով՝ չոր ցամաքային չափավոր ցուրտ ձմեռ և տաք ամառ, բարեխառն՝ երկարատև տաք ամառով և ցուրտ ձմեռով: Համայնքում բնորոշ է ուժեղ քամիներ որոնց հիմնական ուղղությունը հյուսիսային է:

Համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը՝ հիմնականում անասնապահությունը և մեղվաբուծությունը:

Ժողովրդագրություն

Հ/Հ		Մշտական			Առկա		
		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում	
			Տղամարդիկ	Կանայք		Տղամարդիկ	Կանայք
1	Բակչության թվաքանակը մարդ	983	499	484	836	413	423
2	Տնային տնտեսությունների թվաքանակը	256	X	X	234	X	X
2.1	Այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում/ վագոն , տնակ/ բնակվող	2	X	X	2	X	X
2.2	Կիսակառույց տներում բնակվող	6	X	X	6	X	X
3	Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	49	X	X	49	X	X
4	Երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքների թիվը	29	X	X	29	X	X

Համայնքի առկա բնակչության բաշխումն ըստ հետևյալ տարիքային խմբերի (մարդ).

	Ընդամենը
1. մինչև 1 տարեկան.....	16
2. 1-2 տարեկան.....	14
3. 3-4 տարեկան.....	10
4. 5-6 տարեկան.....	17
5. 7-10 տարեկան.....	42
6. 11-14 տարեկան.....	62
7. 15-17 տարեկան.....	44
8. 18-22 տարեկան.....	70
9. 23-45 տարեկան.....	243
10. 46-62 տարեկան.....	163
11. 63 և ավելի տարեկան.....	154

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ժողովրդի իշխանություն իրականացնելու եւ համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի, հինգ տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախա տեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարը պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:Համայնքի ավագանու անդամների թիվը՝5 :

Համայնքապետարանի աշխատակազմում ընդգրկված են 1 հայեցողական ,4 համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող և 4 պայմանագրային աշխատողներ:

Համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը բերված է սխեմայում:

Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով:Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և գույքային այլ իրավունքներ: Համայնքի գույքը ֆիզիկական մեծ մաշվածություն ունի: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1960-ական թվականներին, տարբեր միջոցներով բազմիցս վերանորոգվել է , սակայն դեռևս վերանորոգման կարիք ունի:

Միջհամայնքային Ճանապարհային ցանցը վերանորոգման և բարեկարգման կարիք ունի: Ասֆալտապատ է միայն կենտրոնական փողոցը և գերեզմանատան ճանապարհը, որը ասֆալտապատվել է պետական միջոցներով 2015 թվականին: Ներկայումս անհրաժեշտ է բարեկարգել միջհամայնքային ճանապարհների 60-70 տոկոսը:

Համայնքապետարանի շենքային պայմանները բավարար են,տանիքը ենթակա է վերանորոգման, գույքը նորացված չէ, մասամբ համալրված է համակարգչային տեխնիկայով:

Մշակույթի տունը գտնվում է վթարային վիճակում, ենթակա է կապիտալ վերանորոգման:

Մանկապարտեզի շենքը և հանդիսությունների սրահը 2010 թվականին կապիտալ վերանորոգվել է հովանավորի կողմից, ապահովված է գույքով:
Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը բերված է աղյուսակ N 1-ում:

Զբաղվածություն

Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 484 մարդ, այդ թվում՝ գյուղատնտեսական աշխատանքներով ինքնազբաղվածություն ՝ 330 մարդ, այլ բնույթի ոչ գյուղատնտեսական աշխատանքներով՝154 մարդ,որից՝ պայմանագրային զինծառայողներ՝ 8 մարդ, շուրջ 38 մարդ մեկնում է արտագնա աշխատանքի:

Աշխատատեղերի պակասը և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները խթանում են բնակչության արտագնա աշխատանքի մեկնելուն:

Համայնքում գործում են 1 հաց արտադրող, 1 Հայ-Փոստ Տավուշի մասնաճյուղ սպասարկող,2 էլեկտրաէներգիայի արտադրության ձեռնարկություններ,որոնցում զբաղվածների թիվը կազմում է 19 մարդ:

Աշխատանք չունեցող բնակիչների եկամուտների հիմնական աղբյուրը թոշակներն ու նպաստներն են: Այս հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհը աշխատատեղերի ստեղծումն է:

Գյուղատնտեսություն, հողատարածքների օգտագործում

Վարելահողերի մեծ մասը ոռոգման ջուր չունենալու և հողի ոչ բերրի լինելու հետևանքով դարձել են արոտներ, քանի որ որպես անջրդի վարելահող օգտագործելը եկամտաբեր չէ և արդյունքում համայնքի գյուղացիական տնտեսություններից տարիների ընթացքում հող մշակողների թիվը կրճատվել է: Ոռոգման համակարգերի կապիտալ նորոգումը և ոռոգման ջրի առկայությունը շատերին հնարավորություն կտա զբաղվելու գյուղատնտեսությամբ:

Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, խաղողի, կարտոֆիլի, եգիպտացորենի, հատիկաընդեղենի (լոբու) և մասամբ բանջարանոցային մշակաբույսերի արտադրությամբ ,որն էլ կախված է բնության քմահաճույքներից ՝ կարկտահարության հետևանքով գյուղատնտեսությանը պատճառվում է մեծ վնասներ, գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող հանգամանք են նաև շուկայից հեռու գտնվելը, ինչպես նաև հողակտորների մասնատվածությունը, քանի որ փոքր հողակտորների վրա հնարավոր չէ կազմակերպել ժամանակակից գյուղատնտեսություն:

Համայնքի վարչական տարածքը 2446.52 հա է, որից՝ 1105.65 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում վարելահողեր՝ 348.05հա, բազմամյա տնկարկ՝ 21.90 հա, արոտավայրեր՝ 487.43հա, խոտհարք՝ 147.04 հա, այլ հողատեսքեր՝ 101.23 հա:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ համայնքում անասնապահության հիմնական տեսակներն են՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 890 գլուխ, խոզեր՝ 360գլուխ, ոչխարներ՝ 182գլուխ, թռչուններ՝ 2201 թև, մեղվաընտանիքներ ՝ 448 հատ:

Կրթություն

Համայնքն ունի միջնակարգ դպրոց 320 աշակերտական տեղով , կապիտալ վերանորոգված է, ուսուցիչների թիվը ՝ 27 , որից բարձրագույն կրթությամբ՝ 23 ,աշակերտների թվը՝ 143 :

Համայնքում գործում է համայնքային ենթակայության 1 մանկապարտեզ,որը նույնպես կապիտալ վերանորոգված է , աշխատողների թիվը՝ 7, մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը՝ 30,համայքի ավագանու որոշմամբ մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական վճարը սահմանվել է ամսական 2000 դրամ:

Մշակույթ, սպորտ , հոգևոր դաստիարակություն

Համայնքն ունի մշակույթի տուն, որն ունի կապիտալ վերանորոգման կարիք,այն կնպաստի համայնքում հասարակական միջոցառումների անցկացմանը և դրանով իսկ կունենա դրական ազդեցություն երիտասարդ սերնդի դաստիարակության հարցում:

Գործող գրադարանն ունի 5020 կտոր գիրք, մարզադահլիճ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից:

Գյուղից 6 կմ հարավ արևմուտք գտնվում է Շխմուրադի վանքը, այն գտվում է անմխիթար վիճակում:

Առողջապահություն

Համայնքում գործում է 1 բուժկետ,որը կապիտալ վերանորոգված է,սակայն սարքավորումների և դեղորայքի համալրման կարիք ունի:Բուժկետն ունի 1 աշխատող:

Շրջակա միջավայրի պահպանություն

Բնության և շրջակա միջավայրի պահպանության կարևորագույն գործոններից մեկը կեղտաջրերի հեռացման (կոյուղու) համակարգերի և սելավատարերի կանոնավոր գործունեությունն է: Համայնքի համար առաջնահերթ խնդիր կոյուղագծերի և սելավատարերի կառուցումը: Նշված աշխատանքների իրականացումը բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին կատարելը իրատեսական չէ: Անհրաժեշտ է ուսումնասիրել ներդրումային դաշտը, որոնել և գտնել շահագրգիռ անձանց և կազմակերպությունների,համագործակցել նրանց հետ: Որոշակի ներդրումներ կատարելու դեպքում ամբողջ ծավալով ծրագրի իրագործումը կհամարվի իրատեսական:

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով, համայնքի առաջնային խնդիրներից է համայնքի տարածքում աղբամանների տեղադրումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Հ/Հ	Համայնքի ուժեղ կողմերը	Համայնքի թույլ կողմերը
1	Բարձրագույն կրթությամբ մասնագետների առկայություն	Գտնվում է սահմանին մոտ և մայրաքաղաքից հեռու
2	Շնորհալի և զարգացած երիտասարդության առկայություն	Բնակչության անվճարունակություն
3	Համայնքի ղեկավար,ավագանի-բնակիչներ՝ ամուր կապ	Սոցիալ-տնտեսական պայմանների ցածր մակարդակ
4	Համայնքն ունի անասնապահության զարգացման համար հարուստ բնական կերային բազա:	Ծնելիության նվազում՝կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ
5	Մինչև գյուղ հասնող ճանապարհի բարվոք վիճակ	Գործազրկություն
6	X	Հակակրկտային կայանների բացակայություն
X	Համայնքի հնարավորությունները	Համայնքի սպառնալիքները
1	Գտնվում է Բերդ-Իջևան –Երևան ավտոճանապարհին	Երիտասարդության արտագաղթ
2	X	Կարկտահարության հետևանքով հասցվող վնասներ

2 .ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարությունը

Համայնպետարանի ռազմավարական քաղաքականությունն է՝ հետևողականորեն բարեփոխումներ անցկացնել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանների բարելավման նպատակով:

Հիմնական նպատակները

- Պաշտպանել համայնքի բնակչության իրավունքները և օրինական շահերը.
- Բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.
- Նպաստել մշակույթի, մարզական և առողջապահական օջախների նորմալ գործունեությանը.
- Համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր՝ զարգացնելով գյուղատնտեսությունը.
- Հատուկ ուշադրություն դարձնել կրթության օջախների նորմալ գործունեությանը.
- Միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- Բարձրացնել համայնքապետարանի աշխատակազմի կառավարման արդյունավետությունը:
- Գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ բնակավայրերից մեկը:

Համայնքի հիմնախնդիրները

1.Մշակույթի տան կապիտալ վերանորոգում:
2. Համայնքապետարանի շենքի մասնակի վերանորոգում:
3. Կոյուղագծերի և սելավատարերի կառուցում:
4.Միջհամայնքային ճանապարհների խճապատում:
5. Համայնքի տարածքում աղբամանների տեղադրում:
6. Ոռոգման ջրի ներքին ցանցի վերանորոգում:
7. Փողոցային լուսավորության ընդլայնում:
8. Գյուղտեխնիկայի / հացահատիկահավաք կոմբայն/ ձեռք բերում:
9.Հակակարկտային կայանների ձեռքբերում և տեղակայում
10. Հախում գետի վրայով կամուրջ կառուցելու անհրաժեշտություն
11. Երեխաների համար խաղահրապարակի անհրաժեշտություն
12. Երիտասարդության համար մարզական գույքի ձեռք բերում:
13. Պատմական նշանակություն ունեցող Շխմուրադի վանքի վերանորոգման անհրաժեշտություն

Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ծրագիր N 1.Համայնքապետարանի շենքի մասնակի վերանորոգում

Համայնքապետարանի շենքը ենթակա է մասնակի վերանորոգման:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են

Իրականացնելով այս ծրագիրը՝ կբարելավվի համայնքի բնակչության սպասարկումը, կապահովի համայնքապետարանի աշխատակիցների համար բարեկարգ միջավայրում աշխատանքների կազմակերպումը

Ծրագրի խնդիրները

.Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.
. Կազմակերպել գնումների գործընթաց, կնքել պայմանագրեր շինարարական աշխատանքների
կատարման և այդ աշխատանքների իրականացման ընթացքում հսկողության վերաբերյալ:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կկազմի 2 մլն դրամ:

Ծրագրից սպասվող արդյունքները

. Բարելավել համայնքապետարանի շենքային պայմանները:
Աշխատանքները կազմակերպել 2017-2018 թթ ընթացքում

Ծրագիր N 2. **Կոյուղագծերի և սելավատարերի կառուցում:**

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագրի առաջնահերթության հիմնավորումը բացատրվում է նրանով, որ գյուղի մի քանի թաղամասերում չի գործում կենտրոնացված կոյուղագծի համակարգ, որի պատճառով մարդիկ օգտագործում են տնամերձ հողամասերում կառուցված կոյուղահորերը: Շրջակա միջավայրի պահպանության հարցում կարևոր նշանակություն ունի սելավատարերի կառուցումը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է կանխել շրջակա միջավայրի աղտոտումը և բարելավել բնակչության կենցաղային պայմանները:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

. Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.
.Ուսումնասիրել ներդրումային դաշտը, ինչպես նաև ներգրավել բնակչությանը՝ ծրագրի իրականացման աշխատանքներին.
.Կազմակերպել գնումների գործընթաց, կնքել պայմանագրեր շինարարական աշխատանքների կատարման եւ այդ աշխատանքների իրականացման ընթացքում հսկողության վերաբերյալ:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Հաշվի առնելով այն, որ կոյուղագծերի և սելավատարերի կառուցումը համայնքի համար հանդիսանում է կարեևոր խնդիր և ծրագրի իրականացումը բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրատեսական չէ, ներդրումային ծրագրերի, շահագրգիռ անձանց և կազմակերպությունների կողմից ներդրումներ կատարելու դեպքում համայնքապետարանը կհամագործակցի նրանց հետ՝ ներգրավելով նաև բնակչությանը:
Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կկազմի 3 մլն դրամ:

Ծրագրից սպասվող արդյունքները
Իրականացնելով այս ծրագիրը՝ կարելի կլինի առավելապես ապահովել բնակչության՝ ջրահեռացման համակարգերից օգտվելու հնարավորությունը, կբարելավվի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագիր N 3.Միջհամայնքային ճանապարհների խճապատում:

Քանի որ միջհամայնքային ճանապարհները ասֆալտապատ չեն, անձրևաջրերի հետևանքով ժամանակի ընթացքում ճանապարհների ծածկույթը քայքայվում է և գոյանում են ջրափոսեր: Սույն ծրագրով առաջարկվում է խճապատել համայնքի բարեկարգման ենթակա ճանապարհները:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են

. Փողոցները բերել բարեկարգ տեսքի, ապահովել բոլոր տրանսպորտայինի միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ ՝ տարվա բոլոր եղանակներին:
.Վերացնել փողոցների ջրափոսերը:

Ծրագրի խնդիրները

.Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.
. Կազմակերպել ավազի և խճաքարի փռում համայնքի փողոցներում: Աշխատանքների կազմակերպանը ներգրավել նաև համայնքի բնակիչներին:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի իրականացումը բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրատեսական չէ, շահագրգիռ անձանց կողմից ներդրումներ կատարելու դեպքում համայնքապետարանը կհամագործակցի նրանց հետ՝ ներգրավելով նաև բնակչությանը: Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կկազմի 3 մլն դրամ: Աշխատանքները կազմակերպել 2017-2018 թթ ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ կունենանք բարեկարգ և ազատ երթևեկելի ճանապարհներ:

Ծրագիր N 4. Համայնքի տարածքում աղբամանների տեղադրում:

Համայնքում աղբահանությունը կազմակերպվում է անհատական ձևով, անհրաժեշտ է համայնքի տրածքում տեղադրել աղբամաններ և կազմակերպել աղբահանությունը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է

.Բնակչության շրջանում աշխատանք տանել շրջակա միջավայրի մաքրության, պահպանության գործում
. Կազմակերպել գնումների գործընթաց, կնքել պայմանագրեր աշխատանքների կատարման և իրականացման ընթացքում հսկողության վերաբերյալ

Ծրագրի նպատակներն են

.Աջակցել շրջակա միջավայրի պահպանմանը և սանիտարական մաքրությանը

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կկազմի 1 մլն դրամ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝հնարավոր կլինի կանխել փողոցների աղտոտվածությունը, ապահովել շրջակա միջավայրի սանիտարական մաքրության պահպանման պայմանները:

Ծրագիրն իրականացնել 2017-2018 թթ ընթացքում:

Ծրագիր N 5 .Ոռոգման ջրի ներքին ցանցի վերանորոգում:

Համայնքի ոռոգման ջրի ներքին ցանցը գտնվում է անմխիթար վիճակում: Ոռոգման սեզոնին ոռոգման ջուր չունենալու պատճառով հաճախակի դժգոհություններ են լինում բնակչության կողմից:Ոռոգման ցանցի վթարների պատճառով մեծանում է ջրի կորուստը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են

. Վերանորոգելով ոռոգման ջրի ներքին ցանցը, վերացնել ջրի կորուստը:

Ծրագրի խնդիրները

.Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.

.Համայնքի բյուջեի միջոցների հաշվին անհնար է նշված ծրագրի իրականացումը, սակայն նախատեսվում է ծրագրի ընթացքում որոնել դոնորկազմակերպությունների, հնարավորության դեպքում օգտվել սոցիալական ներդրումային ծրագրերից և իրականացնել նախատեսված ծրագիրը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ :

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կկազմի 3 մլն դրամ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ հնարավոր կլինի վերացնել ոռոգման ջրի կորուստները, ժամանակին կկազմակերպվեն տնամերձ հողամասերի ոռոգման աշխատանքները: Բարձրացնել հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղմթերքի արտադրությունը, մասնավորապես բանջարանոցային մշակաբույսերի:

Ծրագիրն իրականացնել 2019-2020 թթ ընթացքում:

Ծրագիր N 6 .Փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում:

Համայնքի փողոցները հիմնականում ապահովված են փողոցային լուսավորման համակարգերով ,անհրաժեշտ է ընդլայնել փողոցային լուսավորման ցանցը դեպի ծայրամասային թաղամասեր:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է

. ՈՒսումնասիրել և ճշտել այն թաղամասերի ցանկը, որտեղ պետք է իրականացնել ծրագիրը.
. կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.
. կազմակերպել գնումների գործընթաց, կնքել պայմանագրեր աշխատանքների կատարման և իրականացման ընթացքում հսկողության վերաբերյալ

Ծրագրի նպատակներն են

Երեկոյան և գիշերային ժամերին այդ փողոցներով երթևեկելը և վարորդների, և բնակիչների համար դարձնել առավել անվտանգ և ապահով:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարել համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կկազմի 1 մլն դրամ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը և շարունակելով լուսավորման համակարգերի կառուցման և դրանց սպասարկման աշխատանքները, համայնքի բոլոր փողոցները և թաղամասերը ապահովված կլինեն լուսավորվածությամբ, առավել կբարելավվի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:
Ծրագիրն իրականացնել 2019-2020 թթ ընթացքում:

Ծրագիր N 7. Գյուղտեխնիկայի / հացահատիկահավաք կոմբայն/ ձեռք բերում:

Համայնքը չունի հացահատիկահավաք կոմբայն: Բերքահավաք կատարվում է հարևան գյուղերի տեխնիկայով, որի պատճառով երբեմն բերքը հավաքվում է ժամանակից ուշ, ինչը հիասթափեցնում է գյուղացուն հետագայում զբաղվել հացահատիկի մշակմամբ:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են

. Ապահովել համայնքին անհրաժեշտ գյուղտեխնիկայով ,
.Համայնքում մեծացնել հացահատիկի մշակմա ծավալները:

Ծրագրի խնդիրները

.Քանի որ համայնքի բյուջեի միջոցների հաշվին անհնար է նշված ծրագրի իրականացումը՝ անհրաժեշտ է դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ –ին , ուսումնասիրել տեխնիկայի ձեռբերման հնարավորությունները, կնքել համաձայնագիր:
. Ապահովել համայնքի կողմից կատարվոց ներդրումները,
.Որոնել դոնոր կազմակերպությունների և շահագրգիռ անձանց աջակցելու ծրագրի ֆինանսավորման ընթացքում :

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի իրականացումը բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին հնարավոր չէ, շահագրգիռ անձանց կողմից ներդրումներ կատարելու դեպքում համայնքապետարանը կհամագործակցի նրանց հետ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ համայնքում կզարգանա գյուղատնտեսությունը:
Ծրագիրն իրականացնել 2020-2021թթ ընթացքում:

Ծրագիր N 8 Մանկական խաղահրապարակի կառուցում

Ծրագիրը նախատեսվում է համայնքի երեխաների հանգիստը կազմակերպելու համար:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են

. Կառուցել խաղահրապարակ,որպեսզի համայնքի երեխաների առօրյան անցնի ավելի հետաքրքիր և կենսուրախ:

Ծրագրի խնդիրները

.Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.
.Քանի որ համայնքի բյուջեի միջոցների հաշվին անհնար է նշված ծրագրի իրականացումը ՝ որոնել դոնոր կազմակերպությունների և շահագրգիռ անձանց :

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարել դոնոր կազմակերպությունների և շահարգիռ անձանց աջակցությամբ : Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կկազմի 2 մլն դրամ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ կտեղադրվեն տարբեր խաղային ատրակցիոններ , երեխաները կխաղան ոչ թե փողոցներում այլ ՝ խաղահրապարակում:
Ինչ որ չափով հետաքրքիր և ուրախ կդառնա երեխաների մանկությունը:
Ծրագիրն իրականացնել 2018-2020 թթ ընթացքում:

Ծրագիր N 9. Երիտասարդության համար մարզական գույքի ձեռք բերում

Ծրագիրը նախատեսվում է որպեսզի համայնքի երիտասարդության ազատ ժամանակը ծախսվի ավելի հետաքրքիր և արդյունավետ :

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակներն են

. Երիտասարդների շրջանում ավելի ամրապնդել առողջ ապրելակերպը

Ծրագրի խնդիրները

.Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.

.Քանի որ համայնքի բյուջեի միջոցների հաշվին անհնար է նշված ծրագրի իրականացումը ՝դիմել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը և որոնել շահագրգիռ անձանց ՝ ծրագրի իրականացման հարցում աջակցելու համար:
. Համայնքի կողմից նույնպես կատարել ներդրում

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարել պետական միջոցներով , համայնքի բյուջեից և շահարգիռ անձանց աջակցությամբ : Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կկազմի 2 մլն դրամ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Հետաքրքիր և արդյունավետ կանցնի երիտասարդության ազատ ժամանակը ավելի ամրապնդելով առողջ ապրելակերպը:
Ծրագիրն իրականացնել 2020-2021 թթ ընթացքում

Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Համայնքումկոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Տավուշի մարզի Ծաղկավան (Տաուշի շրջ) համայնքում ունի հետևյալ պատկերը.

Եկամտի տեսակը		2016թ.	2017թ. նախատեսված	2018թ կանխատեսում	2019թ կանխատեսում	2020թ կանխատեսում	2021թ կանխատեսում
	Եկամուտներ ընդամենը	19592.3	20088.3	22299.8	22799,8	23299.8	23799.8
2	*Հարկեր և տուրքեր*	3359.0	3789.5	4061.0	4071.0	4091.0	4091.0
1	Հողի հարկ	2221.0	2221.0	2421.0	2521.0	2521.0	2521.0
2	Գույքահարկ	1000.0	1430.7	1450.0	1450.0	1450.0	1450.0
3	Եկամտահարկ						
4	Այլ հարկային եկամուտներ						
'	*Տուրքեր*	100.0	99.5	100.0	100.0	120.0	120.0
1	Պետական տուրքեր						
2	Տեղական տուրքեր	100.0	99.5	100.0	100.0	120.0	120.0
Գ	*Ոչ հարկային եկամուտներ*	350.0	350.0	705.0	705.0	705.0	705.0
1	Համայնքային պահ. հողերի վարձավճ.	150.0	150.0	200.0	200.0	200.0	200.0
2	Գույքի վարձավճարներ	200.0	80.0	80.0	80.0	80.0	80.0
3	Տեղական վճարներ		45.0	50.0	50.0	50.0	50.0
4	Այլ ոչ հարկային եկամուտներ		275.0	375.0	375.0	375.0	375.0
Դ	*Պաշտոնական*	15883.3	16023.8	16523.8	17023.8	17523.8	18023.8
Ե	*Գույքի օտարումից մուտքեր*	-300					
Զ	*Տարեսկզբի ազատ մնացորդ*	553.2					


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ 3.1-2
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ 3.1-3
ԳՈՐԾԱՎԱՐ
ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՀՍԿԻՉ
ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ԱԶԱԿՑՈՒԹ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ՊԱՐԵՏ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏՆՕՐԵՆ

Աղյուսակ 1

1.Համայնքապետարանի վարչական շենք
2.Մշակույթի տուն
3. Մանկապարտեզ
4.Հանդիսությունների սրահ
4.Գրադարան / համայնքապետարանի շենքում /
5. Բուժկետ
6.Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգ
7.Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
9.Հուշարձան
11. Գերեզմանատուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՎԱՆԻ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.)
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
COMMUNITI ADMINISTRATION
OF TSAGHKAVAN(TAUSH REG.)

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ
30 նոյեմբերի 2016 թ. թիվ 24 - Ն
Նիստ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 7,8,9,10,11 հոդվածներով և և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 –րդ հոդվածի 18 և 19 կետերով և համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Ծաղկավան (Տաուշի շրջ.)համայնքի ավագանին սահմանում է .

1. Տեղական տուրքերի դրույքաչափերը՝ ըստ հավելված N 1-ի
2. Տեղական վճարների դրույքաչափերը՝ ըստ հավելված N 2-ի
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից :

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Արման Սպարտակի Բալդրյան կողմ / ստորագրություն /
2. Վաղինակ Սայադի Ղազարյան կողմ / ստորագրություն /
3. Անդրանիկ Սերյոժայի Մկրտումյան կողմ / ստորագրություն /
4. Արծրուն Սևանի Սիմոնյան կողմ / ստորագրություն

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Պ.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
Ծաղկավան (Տաուշի շրջ.)համայնքի ավագանու
2016 թ.նոյեմբերի 30 -ի թիվ 24 –Ն որոշման

2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 7, 8, 9,10,11 հոդվածներով, համայնքի ղեկավարի ներկայացմամ՝ Ծաղկավան(Տաուշի շրջ.) համայնքի ավագանին սահմանում է .

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև **300** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև **200** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ **3000** դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) **201**-ից մինչև **500** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **10000** դրամ,

բբ) **501**-ից մինչև **1000** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բգ) **1001**-ից մինչև **3000** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **20 000** դրամ,

բդ) **3001**-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **30 000** դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև **20** քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար **2000** դրամ,

դ) **20** և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **5000** դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

3) Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է.

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **3000** դրամ.

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ **3000** դրամ:

4). Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար **350** դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **150 000** դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **30 000** դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ **3000** դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում ՝ **1000** դրամ.

5. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլ-տվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև **20** ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1000** դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը **20** և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2500** դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ **1000** դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ **700** դրամ:

7. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն ի
   բականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **10 000** դրամ:

ԾԱՂԿԱՎԱՆ (ՖԱՌԻՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Պ.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Ծաղկավան (Տաուշի շրջ.)համայնքի ավագանու
2016թ. նոյեմբերի 30 -ի թիվ 24 –Ն որոշման

2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 –րդ հոդվածի 19-րդ կետով՝ համայնքի ավագանին սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայություն-ների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

1. Տեղեկանքի արժեք՝ 100 դրամ:
2. Առք ու վաճառքի տեղեկանքի արժեք ՝ 500 դրամ
3. Մահվան տեղեկանք ՝ անվճար
4. Մանկապարտեզի ծնողական վճարի չափը ամսական 2000 դրամ ՝ անկախ երեխայի հաճախման օրերի քանակի:

5.) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. ՝ 500 դրամ

6. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ սահմանվում է մասնակցության վճար՝ 5.0 հազ.դրամ:

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Պ.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՎԱՆԻ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.)
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
COMMUNITI ADMINISTRATION
OF TSAGHKAVAN (TAUSH REG.)

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2016թ. թիվ 25 - Ա
Նիստ N 4

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ / ՀՈԱԿ/ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „ Տեղական Ինքնակառավարման մասին „ օրենքի 16 - րդ հոդվածի 26 կետով և համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքապետարանի աշխատակազմի և Հ.Խաչատրյանի անվ. թիվ 1 մանկապարտեզ (ՀՈԱԿ) աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից ներկայացվող N 1 և N 2 հավելվածների :
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Արման Սպարտակի Բալդրյան կողմ / ստորագրություն /
2. Վաղինակ Սայադի Ղազարյան կողմ / ստորագրություն /
3. Անդրանիկ Սերյոժայի Մկրտումյան կողմ / ստորագրություն /
4. Արծրուն Սևանի Սիմոնյան կողմ / ստորագրություն

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Պ.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N

Ծաղկավան (Տաուշի շրջ.) գյուղական համայնքի ավագա

2016 թվականի նոյեմբերի 30-ի N 25 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատողների թվաքանակը՝ 10

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	___% հավելավճար (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Համայնքի ղեկավար	1	204500	0	204500
	Հայեցողական պաշտոններ				
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	72751	0	72751
	Համայնքային ծառայողներ				
3	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	99206	0	99206
4	Առաջատատր մասնագետ - հաշվապահ	1	92593	0	92593
5	Առաջատար մասնագետ 3.1-2	1	92593	0	92593
6	Առաջատար մասնագետ 3.1-3	1	92593	0	92593
	Տեխսպասարկման անձնակազմ				
7	Խմելու ջրի հսկիչ	1	90414	0	90414
8	Գործավար	0.75	72751	0	54563
9	Կուլտուրայի տան պարետ	0.45	72751	0	32737
10	Ընտանիքի և երեխայի աջակցության համայնքային կենտր. համակարգող	0.6	72751	3092	46742

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Պ.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2

Ծաղկավան_(Տաուշի շրջ.)գյուղական համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 30-ի N 25 -Ա որոշման

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ / ՀՈԱԿ/ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 7

2. Հ. Խաչատրյանի անվան թիվ 1 մանկապարտեզի /ՀՈԱԿ / հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	___% հավելավճար (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Մանկապարտեզի տնօրեն	1	75000	0	75000
2	Դաստիարակ	1	72751	0	72751
3	Դաստիարակ	0.6	72751	3092	46742
4	Խոհարար	0,96	72751	0	69840
5	Դայակ	0,96	72751	0	69840
6	Դայակ	0.6	72751	3092	46742
7	Հաշվապահ	0.6	72751	3092	46742

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Պ.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՎԱՆԻ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.)
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
COMMUNITI ADMINISTRATION
OF TSAGHKAVAN(TAUSH REG.)

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2016 թ. թիվ 26 - Ն
Նիստ N 4

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16 հոդվածի 3-րդ մասով և առաջնորդվելով «Բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝
Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի ավագանին որոշում է .

1.Հաստատել Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած 2017 թվականի տեղական բյուջեն՝
ա) 20088.3 / քսան միլիոն ութանասունութ հազար երեք հարյուր / ՀՀ դրամ եկամուտների գծով:
բ) 20088.3 / քսան միլիոն ութանասունութ հազար երեք հարյուր /ՀՀ դրամ ծախսերի գծով:
2. Հաստատել համայնքի տեղական բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հավելված N 1-ի :
3.Հաստատել համայնքի տեղական բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման համաձայն հավելված N 2-ի:
4.Հաստատել համայնքի տեղական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված N 3-ի:
5.Սահմանել,որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները;
6. Թույլատրել համայնքի ղեկավարին՝
ա)Գանձապետական հաշվի 2016 թվականի ազատ մնացորդն ինքնուրույն ներառել 2017 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար:
բ) Համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև ,որոնց հանրագումարը չի կարող գերազանցել 15 % -ը:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից :

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Արման Սպարտակի Բալդրյան կողմ / ստորագրություն /
2. Վաղինակ Սայադի Ղազարյան կողմ / ստորագրություն /
3.Անդրանիկ Սերյոժայի Մկրտումյան կողմ / ստորագրություն /
4.Արծրուն Սնանի Սիմոնյան կողմ / ստորագրություն /

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ղ.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի ավագանու
2016թվականի նոյեմբերի 30-ի N 26 -Ն որոշման

Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի տեղական բյուջեում սահմանված եկամտատեսակները 2017 թ.

Հ/Հ	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	Գումարը (Հազ. դրամ)
1	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	38,3
2	Հողի հարկ	2221.0
3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1430,7
4	Տեղական տուրքեր	99,5
5	Պաշտոնական դրամաշնորհներ	16023.8
6	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր այդ թվում՝	230,0
	Հողի վարձակալությունից վարձավճարներ	150,0
	Համայնքի սեփականութ.համարվող կառուցապ.իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	80,0
7	Տեղական վճարներ	45,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	20088,3

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՊՂՆԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Ծաղկավան (Տաուշի շրջ) համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 30-ի N 26-Ն որոշման

Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման
2017 թ.

Հ/Հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	Գումարը (հազ. դրամ)
1	Տեղական ինքնակառավարում	13863,3
2	Գյուղատնտեսություն	32,0
3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	250.0
4	Ջրամատակարարում	150.0
5	Փողոցների լուսավորում	350.0
6	Մշակույթ և սպորտ	200.0
7	Նախադպրոցական կրթություն	4200.0
8	Սոցիալական նպաստներ	500,0
9	Պահուստային ֆոնդ	543.0
	Ընդամենը	20088,3

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Պ.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 3
Ծաղկավան (Տաուշի շրջ) համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 30-ի N 26-Ն որոշման

Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման
2017 թ.

Հ/Հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձեր և հավելավճաներ	10493,3
2	Պարգևատրումներ	200,0
3	Էներգետիկ ծառայություններ	980,0
4	Կապի ծառայություններ	120,0
5	Ներքին գործուղումներ	200,0
6	Տեղեկատվական ծառայություններ	20,0
7	Գրասենյակային նյութեր	350,0
8	Տրանսպորտային նյութեր	950.0
9	Սարքավորումների ընթ.նորոգում և պահպանում	100,0
10	Հատուկ նպատակային այլ նյութեր	450,0
11	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	250.0
12	Մասնագիտական ծառայություններ	32,0
13	Ջրամատակարարում	150,0
14	Փողոցների լուսավորում	350,0
15	Մշակութային ծառայություններ	200.0
16	Նախադպրոցական կրթություն	4200.0
17	Սոցիալական նպաստներ	500,0
18	Պահուստային ֆոնդ	543.0
	Ընդամենը	20088,3

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Պ.ՂԱԶԱՐՅԱՆ